

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանը հայտարարում է բաց մրցույթ «Լոռի Փամբակի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Վերոհիշյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) բարձրագույն կրթություն՝ արվեստի տեսություն և պատմություն կամ պատմություն կամ թանգարանային գործ կամ երկրագիտություն կամ աշխարհագրություն կամ մշակութաբանություն մասնագիտություններից որևէ մեկով

բ) ձեռնարկատիրական կամ կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա կամ առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.

գ) իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Աշխատանքային օրենսգիրք, քաղաքացիական օրենսգիրք, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներ և այլ իրավական ակտեր).

դ) կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգ, հիմնադրույթներ մշակելու կարողություն,

ե) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

զ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

է) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

ը) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման փորձ.

թ) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.

ժ) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝

ա) դիմում (լրացվում է տեղում)

բ) մեկ լուսանկար 3 X 4 չափի.

գ) աշխատանքային գրքույկի պատճենը կամ աշխատանքային գործունեությունը հավաստող այլ փաստաթուղթ

դ) ինքնակենսագրություն.

ե) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները՝ բնօրինակների հետ միասին.

զ) կադրերի հաշվառման թերթիկ (լրացված) Ձև-2

է) տեղեկանք մշտական բնակության վայրից.

ը) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում).

թ) բնութագիր վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել):

Տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու իրավունք չունի այն անձը, որը՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատական կարգով զրկվել է պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը սովորաբար պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել իր լիազորությունների իրականացմանը.

4) դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով

հանված կամ մարված չէ.

Մրցույթը կանցկացվի 2020թ-ի հուլիսի 15-ին ժամը 11:00-ին ՀՀ Լոռու մարզպետարանում (հասցեն Լոռու մարզ ք. Վանաձոր Հայքի հրապարակ 1)

Փաստաթղթերը ընդունվում են սույն թվականի մայիսի 15-ից ամեն օր, ժամը 9:00-13:00, բացի ոչ աշխատանքային օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2020թ-ի հունիսի 15-ը ժամը 13:00-ն :

Մրցույթը կկայանա ՀՀ Լոռու մարզպետարանի շենքում /ք.Վանաձոր, Հայքի հրապարակ 1/:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Լոռու մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժին, հեռ 0322-2-10-24 / ք.Վանաձոր, Հայքի հրապարակ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ